



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ ԸԻԴ N 0269/05/13թ.

Վարչական գործ ԸԻԴN 0269/05/13թ.

Նախագահող դատավոր՝ Լ. Ավանեսյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Ն. Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ

25 -ին նոյեմբերի 2014թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Գ.Գրիգորյանի
Ի.Կարապետյանի
Ա. Աբրահամյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Միքայել Հենրիկի Մուսայելյանի ընդդեմ Շուշիի շրջվարչակազմի, Շուշիի քաղաքային համայնքի, ԼՂՀ ԱՆ Շուշի նոտարական տարածքի պետնոտարի, ԼՂՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտարի, ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շուշիի տարածքային ստորաբաժանման, Մարիա Կարապետի Աբաջյանի և Վարշամ Ավետիքի Մնացականյանի՝ ԼՂՀ Շուշիի շրջվարչակազմի ղեկավարի 2007 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 192՝ պետական սեփականություն հանդիսացող կիսավեր շինություն հատկացնելու մասին որոշումը, որոշման հիման վրա Շուշիի քաղաքապետարանի և Մարիա Աբաջյանի միջև 2007 թվականի նոյեմբերի 13-ին կնքված հողամասի առուվաճառքի թիվ 183 պայմանագիրը, պայմանագրի հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-5 մատյանի 074908 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, Մարիա Աբաջյանի և Վարշամ Մնացականյանի միջև 2007 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և պայմանագրի հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-5 մատյանի 074908 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների

մասին վարչական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 26-ի որոշման դեմ պատասխանող Վարչամ Ավետիքի Մնացականյանի ներկայացուցիչ Արմեն Վլադիմիրի Թարխանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1.Գործի դատավարական նախապատմությունը

Միքայել Հենրիկի Մուսայելյանը 2013 թվականի հոկտեմբերի 14-ին հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի /վարչական/ դատարան /այսուհետ՝ նաև Վարչական դատարան/ ընդդեմ Շուշիի շրջվարչակազմի, Շուշիի քաղաքային համայնքի, ԼՂՀ ԱՆ Շուշի նոտարական տարածքի պետնոտարի, ԼՂՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտարի, ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շուշիի տարածքային ստորաբաժանման, Մարիա Կարապետի Աբաջյանի և Վարչամ Ավետիքի Մնացականյանի՝ խնդրելով մասնակի՝ հողամասի 355.15 քառ. մետր մակերեսի մասով անվավեր ճանաչել ԼՂՀ Շուշիի շրջվարչակազմի ղեկավարի 2007 թվականի նոյեմբերի 9-ի՝ պետական սեփականություն հանդիսացող կիսավեր շինություն հատկացնելու մասին թիվ 192 որոշումը, որոշման հիման վրա Շուշիի քաղաքապետարանի և Մարիա Աբաջյանի միջև 2007 թվականի նոյեմբերի 13-ին կնքված հողամասի առուվաճառքի թիվ 183 պայմանագիրը, պայմանագրի հիման վրա ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-5 մատյանի 074908 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, Մարիա Աբաջյանի և Վարչամ Մնացականյանի միջև 2007 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և պայմանագրի հիման վրա ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-5 մատյանի 074908 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, հիմնավորելով հայցը նրանով, որ վիճելի հողամասը դեռ 2005թ. օգոստոսի 8-ին Շուշիի քաղաքային համայնքի որոշմամբ հատկացվել է իրեն և իր սեփականության իրավունքը 2005թ. սեպտեմբերի 2-ին գրանցվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-2 մատյանի 032780 համարի տակ:

Վարչական դատարանի 2013թ. հոկտեմբերի 21-ի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բավարարվել է, հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել վարչական գործ:

Վարչական դատարանի դատական նիստում ավելացնելով հայցային պահանջի չափը՝ հայցվոր Մ. Մուսայելյանը խնդրել է հայցը բավարարել 421.15 քառ. մետր հողամասի մասով:

Վարչական դատարանի /դատավոր Մ.Ստեփանյան/ 2014 թվականի հունիսի 17-ի վճռով հայցը բավարարվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/, 2014 թվականի հունիսի 30-ին պատասխանող Վ. Մնացականյանի ներկայացուցիչ Ա. Թարխանյանի կողմից նշված վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով գործը, 2014 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ բողոքը մերժել է և Վարչական դատարանի վճիռը թողել անփոփոխ:

Վերոնշյալ որոշման դեմ 2014 թվականի սեպտեմբերի 16-ին պատասխանողի ներկայացուցիչ Ա. Թարխանյանը նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների հիմքերով բերել է վճարել բողոք, որում խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 26-ի որոշումը և մերժել ներկայացված հայցը:

Գերագույն դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ վճարել բողոքը վերադարձվել է:

2014 թվականի հոկտեմբերի 17-ին պատասխանող Վ. Մնացականյանի ներկայացուցիչ Արմեն Թարխանյանը կրկին բերել է վճարել բողոք, որը Գերագույն դատարանի 2014 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 24-րդ հոդվածի պահանջները:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Վարչական դատարանը պարտավոր էր պարզել, թե վիճարկվող վարչական ակտով արդյո՞ք խախտվել են հայցվորի իրավունքները և այդ վիճարկվող կիսավեր շինության նկատմամբ հայցվորն ունի՞ որևէ իրավունք, թե ոչ, և գնահատել Վ. Մնացականյանի գույքը բարեխիղճ ձեռք բերող լինելու հանգամանքը:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ Շուշիի տարածքային ստորաբաժանման ներկայացուցիչ Արմիդա Բաբկենի Աբրահամյանի կողմից դատաքննության ընթացքում կատարված հավաստումն այն մասին, որ մինչև 2007թ. կիսավեր շինություններն անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներում չէին նշվում, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածը, եկել է այն եզրահանգման, որ նշված հոդվածի ուժով հայցվորը դարձել է սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում գտնվող կիսավեր շինության սեփականատեր: Մինչդեռ, Արմիդա Աբրահամյանի բացատրությունը որևէ ապացուցողական նշանակություն չունի և չի կարող դասվել ապացույցների շարքին:

Բողոք բերած անձը, մեջբերելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 2-րդ մասը, գտնում է, որ Վարչական դատարանի կողմից չի պարզվել այն հարցը, թե հայցվորը վիճարկվող շինության նկատմամբ ինչ եղանակով է ձեռք բերել սեփականության իրավունք և ունի արդյո՞ք նա այդ իրավունքը: Վերաքննիչ դատարանը բողոքում նշված այդ հիմնավորմանը պատշաճ գնահատական չի տվել:

Վարչական դատարանի վճռի համաձայն՝ վիճարկվող բնակելի տունը հանդիսանում էր հայցվորի պապական տունը, սակայն սույն գործով որևէ գրավոր ապացույց այդ մասին չի ներկայացվել, բացի այդ՝ ըստ Շուշի քաղաքի հին բնակիչների՝ հայցվորի պապական տունը գտնվում է այլ տեղամասում:

Ինչ վերաբերում է Վարչամ Մնացականյանի՝ գույքը բարեխիղճ ձեռք բերող լինելու հանգամանքին, ապա Վերաքննիչ դատարանն այդ հարցը քննության առարկա չի դարձրել, պատճառաբանելով, որ վիճարկվող գույքը հայցվորի տիրապետումից դուրս է եկել անկախ նրա կամքից, և որ սույն գործով գույքը հետ

պահանջելու հայցապահանջ չի ներկայացվել ու ստորագրա դատարանի կողմից նման հարց չի քննարկվել:

Վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասը, բողոք բերած անձը նշել է, որ դատարանը գույքի բարեխիղճ ձեռք բերող լինելու հարցին անդրադառնում է, եթե կողմը՝ որպես սեփականատեր, առարկության կամ պահանջի ձևով անդրադարձել է գույքը պահանջելու հարցին, ինչը սույն գործով առկա է: Այսինքն՝ ստացվում է, որ Վերաքննիչ դատարանը մի կողմից հիմնավորում է այն, որ ստորագրա դատարանն այս հարցը չի քննարկել, մյուս կողմից՝ ինքը նույնպես տվյալ հարցին չի անդրադառնում, մինչդեռ նման պարագայում պարտավոր էր բեկանել Վարչական դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության:

Բողոքաբերի կարծիքով՝ հայցվորը տարիներ շարունակ տեսնում էր, որ իր հարևանությամբ ընթանում են շինարարական աշխատանքներ, սակայն, սպասելով, մինչ դրանք կավարտվեն, նոր դիմել է դատարան և պահանջել, այսպես ասած, «իր գույքը»: Սույն գործով հաստատված է, որ Վարչամ Մնացականյանը չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ հողամասի նկատմամբ գրանցված է հայցվորի իրավունքը, քանի որ Մարիա Աբաջյանը, ումից նա ձեռք է բերել տվյալ գույքը, ուներ այդ գույքի նկատմամբ գրանցված իրավունք:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոք բերած անձը հիմնավորել է նրանով, որ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և որ գործով թույլ է տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի առերևույթ էական խախտում, որի արդյունքում պատասխանողի համար առաջացել են ծանր հետևանքներ՝ նա գյուղում ծանր աշխատանքների շնորհիվ վաստակելով համապատասխան գումար, գնել է կիսավեր շինություն և այն նորոգել, իսկ հայցվորը սպասելով, թե երբ տվյալ շինությունը կկառուցվի, հայց է ներկայացնում դատարան՝ այն պատասխանողից վերցնելու վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 26-ի որոշումը և մերժել ներկայացված հայցը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Շուշիի քաղաքային համայնքի ավագանու 2005թ. օգոստոսի 8-ի թիվ 18 որոշման համաձայն՝ Շուշի քաղաքի Ագուլեցոց փողոցի թիվ 21 հասցեում գտնվող առանձնատունը սեփականության իրավունքով անվարձահատույց հատկացվել է բնիկ շուշեցի Միքայել Հենրիկի Մուսայելյանին /հատոր 1, գ.թ. 11/:

2. Նշված որոշման հիման վրա 2005թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-2 մատյանի 032780 համարի տակ կատարվել է Միքայել Հենրիկի Մուսայելյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ Շուշի քաղաքի Ագուլեցոց փողոցի թիվ 21 հասցեում գտնվող 135.17 քառ. մետր մակերեսով բնակելի տան և 0.139 հա տնամերձ հողամասի նկատմամբ, և նրան տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 037536 վկայականը /հ.1, գ.թ. 12-14/:

3. Ըստ Շուշիի շրջանի վերաբնակիչների բնավորման 2000թ. պայմանագրի համաձայն /որը ստորագրված չէ Մ.Աբաջյանի կողմից/՝ Մարիա Կարապետի Աբաջյանի ընտանիքին հատկացվել է Շուշի քաղաքի Ագուլեցոց 29 հասցեում գտնվող բնակելի տունը 839 քառ.մետր հողամասով, որը ԼՂՀ Շուշիի շրջանի վարչակազմի 9.11.2007թ. թիվ 191 որոշմամբ հանձնվել է Մ.Աբաջյանին՝ որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր սեփականություն /Աբաջյան ազգանունի փոխարեն նշելով Աբադյան/, որի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է 12.12.2007 թ. և 14.12.2007թ. նշված բնակելի տունը հողամասով վաճառվել է Վ.Մնացականյանին /հ.1, գ.թ.85, 88, 90/:

4. Շուշիի շրջանի վարչակազմին ուղղված Մարիա Աբաջյանի 22.10.2007թ. դիմումի համաձայն նա խնդրում է իրեն հատկացնել իր տան հարևանությամբ գտնվող տարածքը՝ առանձնատուն կառուցելու նպատակով /հ.1, գ.թ.55/:

5. Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարի 2007թ. նոյեմբերի 9-ի՝ պետական սեփականություն հանդիսացող կիսավեր շինություն հատկացնելու մասին թիվ 192 որոշմամբ՝ Շուշի քաղաքի Ագուլեցոց փողոցի թիվ 29ա հասցեում գտնվող կիսավեր շինությունը՝ 875.6 քառ. մետր մակերեսով հողամասով ուղղակի վաճառքի կարգով օտարվել է Մարիա Կարապետի Աբաջյանին, որի հիման վրա Շուշիի քաղաքապետարանի և Մարիա Կարապետի Աբաջյանի միջև 2007թ. նոյեմբերի 13-ին կնքվել է թիվ 183 հողամասի առուվաճառքի պայմանագիրը /հ.1 գ.թ. 15, 16/:

6. 2007թ. դեկտեմբերի 12-ին, Շուշի քաղաքի Ագուլեցոց փողոցի թիվ 29ա հասցեում գտնվող 0.08756 հա հողամասի նկատմամբ ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-5 մատյանի 074908 համարի տակ, հողամասի առուվաճառքի պայմանագրի հիման վրա, գրանցվել է Մարիա Կարապետի Աբաջյանի սեփականության իրավունքը /հ.1, գ.թ. 18-19/:

7. 2007թ. դեկտեմբերի 14-ին Մարիա Կարապետի Աբաջյանի և Վարշամ Ավետիքի Մնացականյանի միջև կնքվել և Ստեփանակերտի նոտարական տարածքի նոտարի կողմից վավերացվել է Շուշի քաղաքի Ագուլեցոց փողոցի թիվ 29ա հասցեում գտնվող 0.08756 հա հողամասը 600.000 ՀՀ դրամով օտարելու մասին առուվաճառքի պայմանագիրը, որի հիման վրա նշված հողամասի նկատմամբ 2008թ. հունվարի 28-ին, ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-5 մատյանի 074908 համարի տակ գրանցվել է Վարշամ Ավետիքի Մնացականյանի սեփականության իրավունքը /հ.1, գ.թ.20, 21-23/:

8. Շինարարատեխնիկական փորձագետի 2014թ. մարտի 13-ի Հմ՝ 41613/13 եզրակացության «Շեռտություններ» բաժնի 4-րդ կետի համաձայն՝ փաստացի չափագրման տվյալներով կազմված հատակագծի և փորձաքննությանը տրամադրված իրավունք սահմանող փաստաթղթերում արտացոլված տվյալների համաձայն՝ 421.15 քառ. մետր մակերեսով հողատարածք, որն իր մեջ ներառում է նաև ավերված և նրան կցակառուցված նոր իրականացվող կառույցներ, վերածածկված հողատարածք է, այսինքն՝ այն ներառված է ինչպես Ագուլեցոց փողոցի թիվ 21 բնակելի տան վերաբերյալ 02.09.2005թ. թիվ 037536 սեփականության իրավունքի գրանցման վկայականի հողամասի հատակագծում, այնպես էլ նույն փողոցի թիվ 29ա հողամասի վերաբերյալ 28.01.2008թ. թիվ 082274 սեփականության իրավունքի գրանցման վկայականի հողամասի հատակագծում /հ.1, գ.թ. 117-123/:

9. Սույն գործում որևէ տվյալ չկա պատասխանող Մարիա Աբաջյանի կողմից հայցադիմումի պատճենը ստանալու և գործով իր դիրքորոշումն արտահայտելու մասին:

10. Հայցվոր Մ.Սուսայեյանի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականի հողամասի հատակագծում ավերված շինությունները նշված չեն, իսկ Մ.Աբաջյանի և Վ.Մնացականյանի վկայականներում նշված են:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, որոշումը՝ բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն գործող օրենսդրության՝ դատական ակտերի փոփոխման կամ բեկանման հիմքեր են հանդիսանում գործի քննության ընթացքում թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումները, որոնք ազդել են կամ կարող են ազդել գործի ելքի վրա:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի համաձայն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխանաբար 240-րդ և 241-րդ հոդվածներով սահմանված հիմքերով և կարգով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը չի կիրառել այն օրենքը... կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր, կիրառել է այն օրենքը... կամ իրավական ակտը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել օրենքը... կամ իրավական այլ ակտը: Իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածը, որն անվանված է «Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը», չի թվարկում վճռի բեկանման հիմք հանդիսացող դատավարական իրավունքի նորմերի խախտման բոլոր դեպքերը, սակայն սպառիչ թվարկում է այն դեպքերը /վճռի բեկանման անվերապահ հիմքերը/, որոնց առկայությունը հիմք է հանդիսանում վճռի պարտադիր բեկանման համար:

Սույն վճռաբեկ բողոքը Գերագույն դատարանի վարույթ ընդունելը պայմանավորված է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությամբ և ստորադաս դատարանների կողմից դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտմամբ:

Գերագույն դատարանը սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում հարկ է համարում անդրադառնալ դատարանի կողմից գործի փաստերն ի պաշտոնե պարզելու, ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու լիազորության լիարժեք իրականացման, ինչպես նաև գործի իրական փաստերի բացահայտման գործընթացում ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքով դատարանին վերապահված լիազորություններն ակտիվորեն օգտագործելու հարցերին:

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավունք, որպեսզի իր գործն արդարացիորեն, հրապարակայնորեն և խելամիտ ժամկետներում քննվի օրենքով հիմնված անկախ և անաչառ դատարանի կողմից, որը որոշում կկայացնի իր քաղաքացիական բնույթի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ...:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1/ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ...:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ԼՂՀ Սահմանադրությունը, 44-րդ հոդվածի 1-ին մասում հռչակվելով յուրաքանչյուրի՝ իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը, նկատի է ունեցել դատավարության բոլոր կողմերի իրավունքները:

Ըստ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը... իրականացնում է դատարանը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից հետևում է, որ դատարան դիմած կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել երկու միաժամանակյա պայմանների՝ դիմողի իրավունքների խախտման և Սահմանադրությանը, օրենքներին, այլ իրավական ակտերին հակասելու առկայության դեպքում: Եվ գործը քննող դատարանը պատշաճ իրավական ընթացակարգով պարտավոր է պարզել նշված հանգամանքները և ըստ պարզված հանգամանքների կայացնել համապատասխան դատական ակտ:

Դատական ակտ ընդունելիս լուծման ենթակա հարցերի շրջանակը սահմանված է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝ 1/գնահատում է ապացույցները, 2/ որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, 3/ որոշում է սվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ

իրավական ակտերը, 4/ որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Իսկ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածների 1-ին մասերի բովանդակությունից բխում է, որ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը: Դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Դատարանի խնդիրն է պարզել, թե ինչ ապացույցների հետազոտմամբ է հնարավոր հաստատել կողմերի պահանջների և առարկությունների հիմքում ընկած իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը: Այդ հարցերը լուծելիս դատարանը ղեկավարվում է ապացույցների վերաբերելիության և ապացուցման միջոցների թույլատրելիության կանոններով:

Որոշել ապացույցի վերաբերելիությունը, նշանակում է պարզել, թե այն վերաբերում է գործի էությանը, հաստատում է ապացուցման առարկայի մեջ մտնող փաստի գոյությունը, թե ոչ: Իսկ ապացույցների թույլատրելիությունը նշանակում է, որ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը դատարանին հնարավորություն է ընձեռում վեճի լուծման համար անհրաժեշտ փաստերը պարզելի պաշտոնե, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ...:

Նշված հոդվածների և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի /որը սահմանում է արդարացի դատական քննության իրավունքը/ պահանջներից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

Դատավարության կողմերի իրավունքները սահմանված են ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածում, որոնց թվում է ապացույցներ ներկայացնելու և մասնակցելու դրանց հետազոտմանը իրավունքը:

Գերագույն դատարանը գտնում է, որ իր դեմ ներկայացված հայցադիմումի պատճենը ստանալը և դատական նիստի ժամանակի և վայրի մասին տեղեկացված

լինելը կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության, մրցակցության սկզբունքների ապահովման պայմաններից է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ «հավասարության» սկզբունքը՝ կողմերի միջև «արդար հավասարակշռության» իմաստով պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմ ունենա ողջամիտ հնարավորություն ներկայացնելու իր գործը այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի նվազ բարենպաստ վիճակում: Մրցակցային դատաքննության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն:

Մինչդեռ, ի խախտումն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 75-րդ հոդվածի 7-րդ մասի, 62-րդ հոդվածի պահանջների, սույն գործով հայցադիմումի պատճենը պատասխանող Մ.Աբաջյանին /որը վիճարկվող անշարժ գույքը վաճառել է պատասխանող Վ.Մնացականյանին/ չի հանձնվել և չի ուղարկվել պատասխանողի վերջին հայտնի բնակության կամ գրանցման վայրի համայնքի ղեկավարին, Մ.Աբաջյանը պատշաճ կարգով չի ծանուցվել գործի քննության ժամանակի և վայրի մասին, ինչի հետևանքով նա հայցադիմումի գրավոր պատասխան չի ներկայացրել, դատական նիստին չի մասնակցել և որևէ դիրքորոշում չի արտահայտել հայցի վերաբերյալ, հետևաբար նրա փաստարկները դատաքննության ընթացքում քննության առարկա չեն դարձվել:

Գերագույն դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ /պատշաճ ծանուցումը/ և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի կիրառման հարցին: Գերագույն դատարանը նշել է, որ տվյալ իրավական նորմերը ենթադրում են գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Նշված նորմերի պահանջների խախտումը վճռի բեկանման անվերապահ հիմք է հանդիսանում, ինչը բխում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներից, համաձայն որոնց՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին: Նշված հանգամանքին՝ որպես դատական ակտի անվերապահ բեկանման հիմք, անկախ բողոքի հիմքերից, Վերաքննիչ դատարանը պետք է գնահատական տար:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ հայցվոր Մ.Մուսայելյանի ներկայացրած հայցադիմումի իմաստից բխում է, որ նա ներկայացրել է սեփականության իրավունքի պաշտպանության հայց, որը հենված է սեփականության իրավունքի վրա և անմիջականորեն ուղղված է սեփականության իրավունքի պաշտպանությանը: Հայցվորը գտնում է, որ ինքը զրկված է իր սեփականությունից, ինչը տեղի է ունեցել իրեն պատկանող հողամասի մասով անհիմն վարչական ակտ կայացնելու արդյունքում, որով պատասխանող

Մ.Աբաջյանին տրամադրվել է իր հողամասի որոշակի մասը, որն էլ վաճառվել է պատասխանող Վ.Մնացականյանին: Այսինքն՝ հայցվորը փաստորեն պետական մարմնի ակտը, տեղական ինքնակառավարման մարմնի ու քաղաքացիների միջև կնքված գործարքները, ինչպես նաև քաղաքացիների միջև կնքված գործարքներն անվավեր ճանաչելու միջոցով փորձում է վերականգնել իր ենթադրյալ խախտված իրավունքները:

Ինչպես հետևում է գործի նյութերից, մասնավորապես շինարարատեխնիկական փորձաքննության եզրակացությունից, նույն հողամասի հատվածի նկատմամբ գրանցված է և՛ հայցվոր Մ.Մուսայեյանի և՛ պատասխանող Վ.Մնացականյանի սեփականության իրավունքը ու վերջինիս կողմից նշված հատվածում կառուցվել է երկհարկանի ինքնակամ շինություն: Վարչական դատարանը, բավարարելով հայցը, հաշվի է առել այն, որ հայցվորի իրավունքներն ավելի վաղ էին գրանցված և Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարի 2007թ. նոյեմբերի 9-ի թիվ 192 որոշումը՝ Շուշի քաղաքի Ագուլեցոց 29ա հասցեում գտնվող 875,6 քառ.մետր մակերեսով հողամասն կիսավեր շինությունով վիճարկվող հողամասի մասով կայացվել է օրենքի խախտմամբ և ենթակա է ճանաչման անվավեր, ենթակա են նաև անվավեր ճանաչման նշված որոշումից ածանցյալ բոլոր վիճարկվող գործարքները և պետական գրանցումները, ինչի հետ Վերաքննիչ դատարանը նույնպես համաձայնվել է:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վարչական դատարանը, ի խախտումն վերը նշված հողվածների պահանջների, սույն գործով բազմակողմանի քննություն չի կատարել, հայցի բավարարման հիմքում դնելով միայն շինարարատեխնիկական փորձաքննության եզրակացությունը՝ իրավական գնահատական չտալով դրան և քննարկման առարկա չդարձնելով պատասխանողի առարկությունը, արդյունքում մնացել է անպատասխան դատարանի առաջադրած այն հարցը, թե ինչքան են կազմում Շուշի քաղաքի Ագուլեցոց փողոցի թիվ 21, 29, 29ա հասցեներում գտնվող հողամասերի չափերը, ինչպես նաև ինքնակամ զբաղեցված հողամասի տվյալները՝ դրա առկայության դեպքում: Նշված հարցերին չպատասխանելը փորձագետը պատճառաբանել է նրանով, որ նշված տարածքները հիմնականում չունեն սահմանազատող ցանկապատեր, իսկ փաստացի սահմանագծերը կազմվել են՝ հիմք ընդունելով առկա բնակելի շինությունների փաստացի տեղադրությունները և սեփականության իրավունքի գրանցման վկայականները: Մինչդեռ, անշարժ գույքի՝ տեղանքում որոշակի դիրք ունենալու, հողամասի կարգավիճակի և պատկանելիության վերաբերյալ փաստերը կարող են ապացուցվել որոշակի այնպիսի ապացույցներով, որոնցով հավաստվում է տվյալ շինության կարգավիճակը, հողամասի նկատմամբ առկա իրավունքները, հողամասի չափսերը, այլ հողամասերի նկատմամբ առկա իրավունքները, այլ հողամասերի նկատմամբ ունեցած դիրքը:

Գործով այդպես էլ բաց է մնացել հայցվոր Մ.Մուսայեյանին և պատասխանող Մ.Աբաջյանին /հետագայում՝ Վ.Մնացականյանին/ տրամադրված հողամասերի սահմանազատման հարցը: Դատարանը տեղազննություն չի կատարել կողմերի նշված փաստարկները պարզելու համար, չի գննված Շուշի քաղաքի գլխավոր հատակագիծը, գնահատական չի տրված գործում առկա ինչ-որ «քարտեզից հատվածին», որտեղ հայցվորի տարածքը նշված է 965.4, իսկ պատասխանողինը 1891.9 /հատոր 1, գ.թ.58/, պատշաճ գնահատական չի տրվել վիճարկվող գույքը

կողմերին անցնելու հանգամանքին: Գերագույն դատարանը գտնում է, որ միայն նշված հանգամանքների պարզմամբ հնարավոր կլինի պատասխանել այն հարցին, թե խախտված են արդյոք հայցվորի իրավունքները, թե ոչ, ով է կոնկրետ խախտել այդ իրավունքները, հնարավոր է արդյոք կողմերի միջև հաշտության համաձայնության տարբերակներ փնտրելը, որի ուժով նրանք փոխադարձ կամ միակողմանի զիջումների ճանապարհով վիճելի իրավահարաբերության գծով նորից կորոշեն իրենց իրավունքները և պարտականությունները, դրանով վերացնելով իրենց միջև եղած վեճը:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքում բարձրացված Վարչական և Վերաքննիչ դատարանների կողմից գույքը բարեխիղճ ձեռք բերելու հանգամանքը անտեսելու հարցին, Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սեփականության իրավունքի պահպանումը և պաշտպանությունը փոխկապակցված են, քանի որ պատշաճ քաղաքացիաիրավական պաշտպանությունը հնարավոր է միայն սեփականատիրոջ պահպանվող իրավունքների շրջանակում:

Գերագույն դատարանը փաստում է, որ գույքը հետ պահանջելու հնարավորությունը նախ և առաջ կախված է այն բանից, թե այդ գույքը ձեռք բերողը բարեխիղճ է, թե անբարեխիղճ է: Եվ այն դեպքում, երբ գույքը ձեռք է բերվում բարեխիղճ ձեռք բերողի կողմից, անսահմանափակ վինդիկացիա չի կիրառվում /այսինքն՝ սեփականատերը ոչ բոլոր դեպքերում է իրավասու պահանջել իր գույքը/, ինչը բխում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի պահանջներից, որոնցից հետևում է, որ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ/բարեխիղճ ձեռք բերող/, ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը....սեփականատերերի տիրապետումից դուրս է եկել՝ անկախ նրանց կամքից: Նշվածից հետևում է, որ օրենսդիրը երաշխավորում է ոչ միայն սեփականատերի, այլ քաղաքացիական շրջանառության յուրաքանչյուրի՝ սեփականություն ունենալու իրավունքը, այն առումով, որպեսզի արդարադատության սկզբունքից ելնելով պահպանվի բոլոր մասնակիցների իրավունքների և օրինական շահերի բավանսը: Հետևաբար կարևոր նշանակություն ունի գործարքների կնքման հանգամանքների և գույքը սեփականատիրոջ տիրապետումից դուրս գալու հանգամանքների լրիվ պարզումը: Գերագույն դատարանը սույն վճռաբեկ բողոքում վկայակոչված մյուս փաստարկներին չի անդրադառնում, քանի որ Վարչական դատարանի կողմից թույլ տրված խախտումները, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի կողմից դրանց անտեսման պայմաններում դրանք տվյալ պահին չեն կարող դառնալ քննության առարկա:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ եթե դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործի փաստական հանգամանքները, չի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները, իրավական գնահատական չի տվել գործում առկա բոլոր ապացույցներին, ապա դատարանի կայացրած վճիռը պետք է բեկանել և գործն ուղարկել նոր քննության, քանի որ նշված խախտումները վերացնելու դեպքում միայն հնարավոր կլինի հանգել հայցի հիմնավոր կամ անհիմն լինելու եզրակացության:

Վերը նշված պատճառաբանություններից ելնելով՝ Գերագույն դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված լիազորությունը, որը կայանում է նրանում, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկում է համապատասխան դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Այսինքն՝ սույն վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն. Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի նոր քննության ժամանակ դատարանը կարող է մատնանշել ապացուցման ենթակա նոր փաստ և պահանջել ներկայացնելու դրա հետ կապված նոր ապացույցներ:

Գործի քննության արդյունքում անհրաժեշտ է անդրադառնալ նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Վարչամ Ավետիքի Մնացականյանի ներկայացուցիչ Ա.Վ. Թարխանյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014թ. օգոստոսի 26-ի որոշումը և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ